ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 365-Ա

ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՄԱՍՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.02.2020Թ. N 56-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3, 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, որ ինքնակամ կատարված ձևափոխությունները, ինքնակամ կառուցված խանութը, ջրավազանը, ավտոտնակի նկուղային մասը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Հրաչյա Էվոյանի դիմումը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1.Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 5 փողոց, N 6 հասցեում գտնվող՝ Հրաչյա Էվոյանին սեփականության

իրավունքով պատկանող բնակելի տան մեջ 5 հատ միջնորմի, 3 հատ դռան, 2 հատ պատուհանի ինքնակամ կատարված ձևափոխությունները և 0.15096 հա մակերեսով տնամերձ հողամասում 2009թ. ինքնակամ կառուցված, 54.0 քմ արտաքին մակերեսով (48.2 քմ ներքին մակերեսով) խանութը, 6.8 քմ արտաքին մակերեսով (5.3 քմ ներքին մակերեսով) ջրավազանը:

2.Փոփոխել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 5 փողոց, N 6 հասցեում գտնվող՝ Հրաչյա Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող 54.0 քմ արտաքին մակերեսով (48.2 քմ ներքին մակերեսով) բնակավայրերի բնակելի նշանակության շինության գործառնական նշանակությունը և այն հաշվառել հասարակական նշանակության՝ որպես խանութ օգտագործելու:

3.Օրինականացված 5 հատ միջնորմի, 3 հատ դռան, 2 հատ պատուհանի ձևափոխությունների համար՝ 6900 (վեց հազար ինը հարյուր) դրամ, 54.0 քմ արտաքին մակերեսով խանութի համար՝ 74520 (յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսան) դրամ, 6.8 քմ արտաքին մակերեսով ջրավազանի համար՝ 4692 (չորս հազար վեց հարյուր իննսուներկու) դրամ, 24.2 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկուղային հարկի համար՝ 16698 (տասնվեց հազար վեց հարյուր իննսունութ) դրամ սահմանված արժեքներով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6.Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 27.02.2020թ. «Սեփական տնամերձ հողամասում բնակելի տան ինքնակամ կատարված ձևափոխությունները, ինքնակամ կառուցված խանութը, ջրավազանն օրինականացնելու մասին» N 56-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. նոյեմբերի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 366-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 25.11.2020թ. տրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1.Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 1/22 շենքի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 32.86 քմ արտաքին մակերեսով (26.3 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2.Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 1/22 շենքի հյուսիսային մասում գտնվող, 1999թ. ինքնակամ

կառուցված, 32.86 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00329 հա մակերեսով հողամասով:

3.Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 1/22 շենքի հյուսիսային մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/22-15/1 փոստային հասցե:

4.Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00329 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Արմեն Ռոբերտի Կարապետյանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. նոյեմբերի 26
ք. Ալավերդի